

Մելգոնեանի Առումը

(Յովհաննէս Թումանեանի անկիւնէն)

Կ'ասմունքէ՛ Յակոբ Հայրապետեան

Հե՛շ պարոննե՛ր ականջ արէք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ջահել տղէք,
Լաւ ու՛շք դրէք իմ խաղին:

Մենք ամենքս հիւր ենք կեանքում,
Մեր ծննդեան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում,
Էս անցաւոր աշխարհից:

Անց ենք կենում, սէր ու խնդում,
Խաղաղութիւն գանց ու գահ,
Մահը մերն է, մենք մահիկնը,
Մարդուս գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ լաւ իմացէք,
Որ խօսւում է դարէդար,
Երնէկ նրան, որ իր գործով
Կ'ապրի անվերջ անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեր,
Անէ՛ծք նրա չար գործին,
Որդիդ լինի թէ հեր ու մեր,
Թէ մուրագով սիրած կին:

Ես լաւութեան խօսք եմ ասում,

Որ ժպտում է մեր սրտին,
Ով չի լսում, թեկուզ դուշման,
Լաւ արարքը լաւ մարդին:

Էյ լա՛ւ կենաք, ապանջ արէք,
Մի բան պատմեմ հիմի ձեզ,
Խօսքս տեսէք ու՞ր է գնում
Քաջ որսկանի կիւլի պէս:

—

Նատիր շահը միտք հաւաքեց,
Միտք հաւաքեց անհամար,
Եկաւ Մելգոնեանը պատեց,
Ինչպէս գիշերն է խաւար:

-Հէյ քաջ սաներ, - կանչեց շահը,
Անմահ էիք ձեզ կարծում,
Եկ բերել եմ ես ձեր մահը,
Ի՞նչ էք թառել ամրոցում:

-Մի պարծենա գոռոզ նատիր, -
Հակաճառեց մի հատ սան,
Գլխովը շատ ամպեր կ'անցնեն,
Սարը միշտ կայ անասան:

Ասին կանչին մեր սաներին,
Խորհուրդ տուին իրարու . . .
Ու ընտրեցին միակ ուղին,
Ամէն կերպ պայքաւերու:


Ու քառսուն օր, քառսուն Գիշեր,
Վէճ վիճեցին անդադար,
Եղան զոհեր, պարապ ծախսեր,
Ճամբին վրայ անարդար:

Ու միշտ նրանք, յաղթանակով,
Վերադառնում էին տուն.
Սպասում էր էնտեղ Կինը,
Փայլուն դէմքով միշտ ժպտուն:

Էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թէ աշուղն էլ ունենար,
Առանց զէնքի,
Առանց զօրքի,
Ծառերի դէմ կը մնար:

Սիրոյ հնոց,
Կրակ ու բոց՝
Էնպէս աչքեր թէ ժպտան,
Մարդու համար
Օրուայ պէս վառ
Գիշերները լոյս կտան:

Վարդի թերթեր՝
Էնպէշ շուրթեր
Թէ յաղթութիւն քեզ մաղթեն,



Էլ քեզ ո՛չ շահ,
Ո՛չ ահ ու մահ,
Ո՛չ զէնք ու զօրք կը յաղթեն:

Ու Կռուի դաշտում շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրունի.
Նրան՝ իր տեսքով, հասակով, ասին,
Չի հասնի չքնաղ **Հուրին Նայիրիի:**
Ծով են աչքերը **Նիւ-Եորքի դասեր,**
Ու կորչում է մարդ նրա հայացքում,
Ճակատը ճերմակ էն ձիւնից էլ դեռ,
Որ բարձր **Մասիսի** գագաթն է ծածկում:
Նա է շունչ, հոգին **ՀԲԸՄ-ի,**
Նրա սիրով են հարբած սաղ **Նրանք,**
Նրա ժպիտն է **իրենց** ուժ տալիս,
Որ դաշտ են իջնում առիւծի նման:
Թէ տիրես, մեծ շահ դու նրա սրտին,
Մնացածն անզօր կ'ընկնեն ոտիդ տակ,
Հանգիստ կը տիրես ե՛լ **ՄԵԼԳՈՆԵԱՆԻՆ,**
Որ չես կարենում էսքան ժամանակ:

Էսպէս է ասել հնուց էդ մասին
Ֆարսի բլբուլը, անմահ Ֆիրդուսին.
Ի՛նչը կը յաղթի կեանքում հերոսին,
Թէ չլինի
Կինն ու գինին:

Ու ղրկեց շահը իր թովիչ երգչին.
Գնա տ'ես, ասաւ, **ԼՈՒԻԶ ՄԻՄՈՆԻՆ,**
Երգի՛ իմ սէրը նրա առաջին,
Պատմի իմ փառքը ու գանձը անհուն:
Խոստացի՛ր նրան իմ ոսկի գահը,
Խոստացի՛ր նրան ամէ՛ն, ամէն բան,
Ինչ որ կարող է խոստանալ շահը,
Երկրակալ **շահը** իր սիրած կնկան:

Ուր անեղ Կռուով չի մտել շահը,
Մտնում է դաւը իր սել փողի հետ.
Եւ անա մի օր ծեռ, թափառական
Մի աղքատ աշուղ մտաւ **Միջնաբերդ:**

Գոռում են , դողում **Կիպրիա ձորերը,**
Կանգնած է **շէնքը** շահի հանդիման.
Զարկում են, զարկում դուշման մտքերը,
Տուար է հոսում հեղեղի նման: *Forever*

Զարկում են, զարկում **հակասող մտքեր,**
Զոհեր են գնում **անմեղ Սերունդներ.**
Երգում է աշուղն իր շահի սէրը,
Անհուն գանձերը ու փառքն
անսահման.....

Լսում է մատաղ **Սիմոն** տիրուհին.
Եւ վրդովում են իր միտքը թաքուն

Դաւաճան գործի ամօթը խորին
Եւ **Նիւ-Եորքեան** փառք ու մեծութիւն...

*Հսու՛մ ես դու, սիրուն տիկին,
Ա՛յ նազանի աննման.
Նայի շահին, իրեն ուժին,
Աշխարհի տէրն անսահման...*

*Մեզ պէս տկար մարդ է նա էլ՝
Սիրուններին միշտ գերի.
Քու ճակատին Թագ է վայել,
Լինես շքեղ Թագուհի...*

Հսում է **Լուիզ Սիմոն** տիրուհին.
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից...
Ու դարձաւ նա լուռ, դալուկ, մտախոհ,
Ու քունը փախաւ սիրուն աչքերից...

Դարձաւ եւս մի **25** տարի, **Forever**
Նոր գոյն ստացաւ հին **Մելգոնեանը**,
Յաղթական իր նոր նուաճումներով,
Ցնծութեամբ տօնեց իր **Յօբելեանը**:

Խնճոյք է սարքել **Սիմոն** տիրուհին,
Յերեկ է արել խաւառ գիշերը.
Հեղեղի նման խոստումներ տալիս,
Ու քէֆ է անում դպրոցին տէրը:

Պտոյտ է գալիս չքնաղ **Տիրուհին**,

Անցնում է, հսկում սեղաններն ամեն,
Հորդորում, խնդրում, որ ուրախ լինեն,
Որ լիքն ու առատ բաժակներ քամեն:


Ու թնդում է Միջնաբերդը
Էն աղմուկից խնդութեան,
Որոտում են տաղն ու երգը
Գոռ ձայներով յաղթական:

Խմում են զոհուող մեծերի փառքին
Որ կռուի դաշտում կյանք չեն խնայում,
Եւ անմահների սուրբ յիշատակին,
Որ երկնքից են այժմ իրենց նայում:

Ու հանգչում է Միջնաբերդը,
Պապանձում է ու մարում ,
Հարբած, յոգնած են բոլորը,
Մրափում են խաւարում:

Լուռ ու խաւարչտին կամարների տակ,
Յոգնած ու քնած բազմութեան վրով
Թռչում են, թռչում, սեւ, չարագուշակ
Երազներն ահեղ, անվերջ խմբերով:

Երազ է տեսնում մինչ Մելգոնեանցին,
Որ վիշապ օձը եկել է ահա,
Եկել փաթաթուել, իր բերդն է պատել,
Գլուխը դրել ետ պոչի վրայ:



Պառկած է ահա մեր Մելգոնեանցին,
Նազելի կնոջ գլուխն իր կրծքին,
Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ,
Թո՛ղ, որ սպանեմ ես էդ հրեշին:

Էսպէս է ասում մինչ Մելգոնեանցին,
Ու զարհուրանքով տեսնում է յանկարծ,
Իրեն սիրելի կնոջ գլխի տեղ
Օձի գլուխն է կրծքին ծանրացած:

Զլինի՞ թէ յաղթահարուած,
Ճարը հատած թշնամին
Դաւ է դնում մութն ու մեռած
Կէս գիշերուայ էս ժամին:

Վե՛ր կացեք, վե՛ր, ամբողջ գիշեր
Մարդ է գնում ու գալիս.
Հե՛յ, զարթնեցէ՛ք, Սասնայ Ծուռեր՝
Պահակներ՝ Մելգոնեանիս:

Վե՛ր կացեք, վե՛ր, հարբեցրել է
Իր յաղթական հիւրերին,
Բաց է անում դուռն ու դարպաս
Զեր դաւաճան տիրուհին:

Դա՛ւ... դա՛ւ... ելեք ձեր խոր քնից,
Քայլ առեք շու՛տ... Մ'ի լռեք, Մ'ի...

—

Բաց արաւ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհի վրայ, Կիպրոսի վրայ,
Դատարկ դպրոցին, սեւ ամպի նման,
Գիշատիչ անգղեր պտտուում են ահա:

Յաղթութեան փառքով ու գինով հարբած
Քնած են բերդի անգի՛ն զաւակներ
Ու յաւիտեան էլ գնած պիտ՛ մնան,
Դաւին անտեղեակ, ցաւին անտարբեր:

Նստած է շահը. նրա առաջին
Ահա իրիկուան քէֆի սեղանը.
Նայում է շահը անտեր գահույթին,
Մտքով անցնում է աշխարհի բանը:

Աշխարհում հաստատ չկա՛յ ոչ մի բան,
Ու մի՛ հաւատայ երբեք ոչ մէկին.
Ոչ բախտի, փառքի, ոչ մեծ յաղթութեան,
Ոչ սիրած կնկայ տուած բաժակին...

Ու լի դառնութեամբ հարցնում է նա
Դալուկ, մարմարիոն Սիմոն տիրուհուն.
-Պատասխան տուր ինձ, մատնիչ սեւաչյա,
Մելգոնե՛անը թէ Ես էի քեզ սիրուն...

-Մելգոնեանն էր սիրունը քեզնից առաւել,
Մի բարձր ու ազնիւ ԳԱՂԱՓԱՐ էր նա.
Կնոջ մատնութեամբ կռիւ չէր տարել,

Չէր եղել կեանքում երբեք սրիկա...

Էսպէս տիկինը տուաւ պատասխան .

Անհուն ցասումից մոնչաց շահը .

-Հէյ, դահիճ, գոռաց նա գազանի նման .

դահիճը իսկոյն մտաւ սրահը:

—

Դահիճն եկաւ ոտից գլուխ

Կարմիր հագած ու արիւն,

Ու դուրս տարան իր պալատից

ՀԲԸՄ-ի տիրուհուն:

Անցաւ անտես ու աննման

Էն սիրունը աշխարհից,

Ինչպէս ծաղիկն անցած գառնան,

Որ չի ծաղկի էլ նորից:

Անցաւ զալում էն մեծ շահը,

Իրեն փառքով ու խելքով,

Անցաւ նաեւ Մելգոնեանցին

Լուսոյ անշէջ տաճարով:

Ու նրանցից մէնակ անմեռ

Էս զրոյցը հասաւ մեզ,

Որ մեզանից յետոյ էլ դեռ

Պէտք է խօսուի միշտ Էսպէս:

—

Հէյ, պարոններ՝ ականջ արէք

Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, ճահել տղէք,
Լաւ ու՛շք դրէք իմ խաղին:

Մենք ամէնքս հիւր ենք կեանքում,
Մեր ծննդեան փուչ օրից,
Հերթով գալիս անց ենք կենում
Էս անցաւոր աշխարհից:


Անց ենք կենում, սէր ու խնդում,
Խաղաղութիւն, գանց ու գահ,
Մահը մերն է, մենք՝ մահիկը,
Մարդուս գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ լա՛ւ իմացէք,
Որ խօսվում է դարէդար,
Երնէ՛կ նրան, որ իր գործով
Կ'ապրի անվերջ անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեր,
Անէ՛ծք նրա չար գործին,
Որդիդ լինի թէ հեր ու մեր,
Թէ մուրազով սիրած կին:

Ես լաւութեան խօսք եմ ասում,
Որ ժպտում է մեր սրտին.
Ով չի լսի, թեկուզ դուշման,
Լաւ արարքը, լաւ մարդին:

Մեղգոնեանը բանալին է՝
Ցրուած Հայու միութեան,
Ու Մաշտոցեան մատանին է,



Վկան՝ Հայու Յարութեան:

